



Տեսանկիւն

Քաղաքակրթութիւնները Դուրսի Ազդեցութեամբ Չեն Կործանին Այլ Ներսի Ուժերու Վատոգիութեամբ

Հայրենիքի իրադարձութիւններով մտահոգ եւ քիչ մըն ալ անճար երբ նստած կը մտածէի, թէ ինչպէ՞ս է ելքը: Կը մտմտայի, թէ Հայ ժողովուրդին արժեքներն ու պետականութիւնը իրենց հիմքէն խախտող «թաւշեայ» կոչուող այս պատմական թիրախացումը միևնույն Ե՞րբ պիտի շարունակէ իր կործանիչ ընթացքը Հայ ժողովուրդի արդի պատմութեան մէջ, երբ զուգահիշաբար ել-նամակ մը ստացայ թերթիս բարեկամ Դոկտ. Մկրտիչ Պուլտուքեանէն:



Նամակին բովանդակութիւնը գրախօսական մըն էր ստորագրուած *Քրիստոֆըր Կուկի*ի կողմէ, որ կ'անդրադառնար Նախորդ դարու առաջին կեսի իրատարակուած գիրքի մը, որուն հեղինակն է անգլիացի պատմաբան՝ *Առնոլտ Թոյնայի*:

Այս գրախօսականը կը կեդրոնանար անգլիացի վերոյիշեալ պատմաբանին Պատմութեան Ուսումնասիրութիւն Մը (A Study of History) վերնագրուած գիրքին բովանդակութեան վրայ:

Մեր յարգելի բարեկամը իր նամակին մէջ ազնուութեամբ կը յանձնարարէր կարդալ գրութիւնը, որ ըստ իրեն կը համընկնի Հայաստանի եւ Սփիւռքի ներկայ իրավիճակին հետ: Դոկտ. Պուլտուքեանը իր նամակին մէջ ազնիւ ակնարկով մը, իմ հայեցողութեան ձգած էր անդրադառնալ անոր մասին մեր թերթին մէջ:

Նախ սիրով կարդացի գրախօսականը ապա գտայ գիրքին ամփոփ տարբերակը (աշխատասիրութիւնը 12 հատոր է): Չարմանալիօրէն հետաքրքրական տեսութիւններու յանգած աշխատասիրութիւն մըն է, որուն մէջ հեղինակը ուսումնասիրած է մարդկային պատմութիւնը ձեւակերպած 23 տարբեր, մեծ ու փոքր քաղաքակրթութիւններու վերելքն ու անկումը:

Ըստ հեղինակին, քաղաքակրթութիւններու ճակատագիրը պայմանաւորուած է այն բանով, թէ անոր անդամները ինչպէ՞ս կը հակադարձէն իրենց դէմ դրուած մարտահրաւերներուն:

Հիմնուելով տարիներ տեւած իր ուսումնասիրութիւններուն վրայ, հեղինակը կը շեշտէ, թէ քաղաքակրթութիւններ իրենց անկումի ճամբան կը բռնեն երբ կը կորսնցնեն տուեալ քաղաքակրթութեան հիմքը՝ հանդիսացող բարոյական իւրայատուկ արժեհամակարգը, մինչ անոր վերնախաւը *փարագիթի* կը վերածուի, ներսէն վնասելով մարմինը, իմա՝ տուեալ ժողովուրդին քաղաքակրթութիւնը:

Ուսումնասիրութեան յայտնագործումներէն է այն փաստը, թէ քաղաքակրթութիւն մը կը կործանի իր հոգեւոր արժեքներէն հեռացումով ու զանոնք անտեսելով, հոգեւոր աշխարհի մէջ մահացու մեղք համարուող, իր անդամներուն ինքնահաւանութեան ու հպարտութեան պատճառով, ինչպէս նաեւ տուեալ քաղաքակրթութեան բաղկացուցիչ տարրին մանաւանդ դեկավարութեան աւելորդ ինքնավստահութեամբ:

Շաբ. Էջ 02

Լիբանանեան Լուրեր

Նասրալլա Կ'ուզէ Փոխել «Խաղի Կանոններ»ը Իսրայելեան Կեդրոն

Իսրայելեան «Երուսաղէմի հանրային եւ պետական հարցերու՝ Երուսաղէմի կեդրոն»ը հաղորդագրութեամբ մը անդրադարձած է 13 Յուլիսին Հրճպալլայի առաջին քարտուղարի ելոյթին, ընդգծելով որ Հասան Նասրալլայի խօսքը յայտարարութիւն է առճակատման նոր փուլի մեկնարկի մասին, որ պիտի չսահմանափակուի միայն Լիբանանի ափերուն: Այս մասին կը հաղորդէ «Արեւելք», վկայակոչելով «Ալ Մայատին» կայանը:



Կեդրոնի առանձին ուշադրութեան առարկան դարձած է Լիբանանի եւ Իսրայելի միջեւ ծովային սահմանագծումի վերաբերեալ Նասրալլայի պարտադրած նոր ձեւաչափը:

Ըստ հաղորդագրութեան, Հրճպալլայի առաջնորդ Հասան Նասրալլան նոր բանաձեւ սահմանած է Լիբանան-Իսրայել ծովային սահմանագատման շուրջ բանակցութիւններ վարելու համար. աւելին՝ Նասրալլա կը սպառնայ թիրախաւորել տարածաշրջանին մէջ իսրայելեան նաւթի եւ կազի բոլոր հարթակները ողջ Միջերկրական ծովին մէջ, եթէ առաջիկայ շաբաթներուն չյարգուին տնտեսական ջուրերուն մէջ նաւթի եւ կազի Լիբանանի իրաւունքները:

Հաղորդագրութեան մէջ նաեւ գրուած է, որ Հրճպալլայի առաջնորդը օգտուելով ԱՄՆ նախագահ Ըօ Պայտընի տարածաշրջան կատարած այցէն՝ զգուշացուցած է Միացեալ Նահանգներն ու Իսրայելը Լիբանանի իրաւունքները անտեսելու փորձերէն:

Ան 13 յուլիսի իր ելոյթին մէջ Իսրայելը զգուշացուցած էր յառաջիկայ սեպտեմբերին նախատեսուող «Քարիշ» հանքավայրէն կազի արդիւնահանում սկսելու մասին՝ ըսելով, որ եթէ Լիբանանը երկու ամսուան ընթացքին չըստանայ իր իրաւունքները, ապա իրավիճակը շատ բարդ պիտի ըլլայ:

Շաբ. Էջ 03

Հայկական Լուրեր

Արցախը Փրկելու Կարելիութիւն Առկայ Է. Դաւիթ Պապայեան

Արցախի արտաքին գործոց նախարար Դաւիթ Պապայեան գրառում կատարած է Արցախի վերաբերեալ, ուր ըսուած է.-

«Արցախը ծանր վիճակի մէջ է, եւ նրա «ապաքինումը» գերիսնդի է համայն հայութեան համար: Արցախի ճակատագրից է կախուած ողջ հայ ժողովրդի ապագան: Արցախը կանգնած է գոյաբանական սպառնալիքների առաջ, բայց չնայած բոլոր վտանգներին ու դժուարութիւններին, կան բոլոր հնարաւորութիւնները երկիրը փրկելու եւ նրա ապահով ապագան ապահովելու համար: Սա պահանջում է հայրենասիրական եւ պրոֆեսիոնալ (մասնագիտական) մօտեցում ոչ միայն աշխատանքի, այլ ընդհանրապէս կեանքի նկատմամբ»:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայրապետական Այց Ամերիկայի Միացեալ Նահանգներ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպումներ կ'ունենայ թեմական եւ ազգային կառույցների ներկայացուցիչների հետ:

Շրջանային Լուրեր

Ալիեւը Չեկուցած Է Հայաստանի Եւ Ազրայեյճանի Միջեւ Գործընթացներու Դրական Ուղղութեան Մասին. Էրտողան

Ալիեւը զեկուցած Հայաստանի եւ Ազրայեյճանի միջեւ գործընթացներու դրական ուղղութեան մասին: Այս մասին յայտարարած է Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Էրտողանը: Ան մեկնաբանած է «Չանգեզուրի միջանցք»-ին նախագիծը, որուն բացման կ'աջակցի Ազրայեյճանը: Այս մասին, ըստ NEWS.am-ի, հաղորդած է Anadolu-ն:



ընթացներու դրական ուղղութեան մասին: Ալեյի շուտ տեղի ունեցած է Ազրայեյճանի, Հայաստանի եւ ԵՄ ղեկավարներու եռակողմ հանդիպումը: Այս հանդիպումը, ըստ Ալիեւի, նոյնպէս անցած է դրական. Ըստ ինձի՝ ամէն ինչ կ'ընթանայ այնպէս, ինչպէս ծրագրաւորուած է: Շուտով այդ շրջանին մէջ (Կովսական (Չանգեզուր-խմբ.)) կը բացուի Նոր օդակայան», - ըսած է Էրտողանը:

«Պարոն Փութինը, եթէ չեմ սխալիր, վերջերս խօսած է Նախագահ Իլիամ Ալիեւի հետ: Հետո գրոյցի ընթացքին՝ պարոն Փութինը ըսաւ, որ ողջոյններ բերած է Ալիեւէն, որուն նախապէս պատմած էր հետոս յառաջիկայ հանդիպման մասին», - ըսած է ան: «Իլիամ Ալիեւը զեկուցած է գործ-

ՑԱԲԱԼԻ ԱՐԿԱԾ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Նորընտիր Առաջնորդ Հոգ. Տ. Մեսրոպ Վրդ. Պարսամեան Ունեցած Է Ծանրակշիռ Ինքնաշարժի Արկած Մը

Խոր վիշտով կը տեղեկանանք թէ Հայաստանեայց Առաքելական Սրբ. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Նորընտիր Առաջնորդ Հոգեւորի Տ. Մեսրոպ Վրդ. Պարսամեան Շաբաթ, Յուլիս 16-ի առաւօտեան ինքնաշարժի լուրջ արկած մը ունեցած է:



Նորընտիր առաջնորդ Հայրը միայն քանի մը օրեր առաջ վերադարձած էր Մար Աթոռ կատարած պաշտօնական այցելութենէ մը, ուր խորհրդակցութիւններ ունեցած էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի հետ:

Գիտակից իր պարտականութեան, Մեսրոպ Վրդ. ինք անձնապէս կը վարէր իր ինքնաշարժը առանձին եւ կ'ուղուէր դէպի Արեւելեան Թեմի Առաջնորդարանին պատկանող Ս. Վարդան ճամբարը: Արկածը տեղի ունեցած է ճամբարի մերձակայքը:

Հակառակ արկածին ծանրակշիռ տարողութեան, Աստուծոյ Նախախնամութեամբ, Առաջնորդ Հօր կեանքը վտանգուած չի եւ Նոյն օրն իսկ ան ենթարկուած է վիրաբուժութեան: Վնասուած են Հայր Սուրբին երկու կրունկները եւ կոնքը: Կ'ակնկալուի, որ յառաջիկայ օրերուն ան ենթարկուի յաւելեալ լրացուցիչ վիրաբուժական միջամտութիւններու:

Ցաւալի այս լուրը անմիջապէս փոխանցուած է Վեհափառ Հօր: Շուտափոյթ եւ ամբողջական ապաքինում կը մաղթենք սիրելի Առաջնորդ Հօր:

Ն.Պ.

Լուրեր Արաբական Աշխարհէն

Իրաքցիք Կը Պահանջեն Թուրքիոյ Դեսպանին Արտաքսումը

Իրաքի վարչապետ Սուլթաֆա ալ Բազիմին 21 յուլիսը յայտարարած է ազգային սգօ օր, Տիգրի վրայ Թուրքիոյ հրետակոծութեան 9 զոհերու յիշատակին: Այս մասին տեղեկացուցած է «AFP»-ը:

Քիւրտ պաշտօնեայի խօսքով՝ անոնց մարմինները պետք է հասցուին Պաղտատ Էրպիլէն՝ ընտանիքներուն յանձնվելու համար:

Չահի շրջանի Փարահ գիւղին մէջ հրետակոծութեան հետեւանքով վիրաւորուած է նաեւ 23 մարդ, որոնց մեծ մասը՝ տեղի զբօսաշրջիկներ:

Հրետակոծութիւնը ցասման այլք բարձրացուցած է Պաղտատի մէջ թրքական վիզայի կեդրոնի առջեւ:

Ցուցարարները վանկարկած են կարգախօսներ՝ պահանջելով վտարել Թուրքիոյ դեսպանը: «Մենք կ'ուզենք այրել դեսպանատունը: Դեսպանը պետք է վտարուի, - ըսած է 53-ամեայ ցուցարար Ալի Եասիլը: - Մեր կառավարութիւնը ոչինչ կ'ընէ»: Չորեքշաբթի բողոքի ցոյցեր տեղի

ունեցած են նաեւ շիրթ Նաճաֆ եւ Զարպելա սրբավայրերու մօտ, ինչպէս նաեւ հարաւային Նասիրիա քաղաքին մէջ:

Իրաքի վարչապետը Թուրքիոյ Նախագահ շարժուցած է, որ Իրաքը «պատասխան հարուածի իրաւունք կը վերապահէ»՝ հրետակոծութիւնն անուանելով ինքնիշխանութեան «աղաղակող խախտում»:

Իրաքը յայտարարած է, որ Անգարայէն ետ կանչած է իր վստահուած անձը, եւ պահանջած է Թուրքիայէն պաշտօնական ներողութիւն խնդրել, ինչպէս նաեւ «դուրս բերել զինուած ուժերն ամբողջ իրաքեան տարածքէն»:

Թուրքիոյ արտաքին գործոց Նախարարութիւնը չընդունիր հրետակոծութեան պատասխանատուութիւնը՝ յայտարարելով, որ նման «ահաբեկչութիւններ» կատարուած են «ահաբեկչական կազմակերպութիւններու» կողմէ:

Տեսանկիւն

Քաղաքակրթութիւնները Դուրսի Ազդեցութեամբ Չեն Կործանին...

Սկիզբը Էջ 01

Բարոյական անկումը իր հետ կը բերէ ինքնակործան (սեփական քաղաքակրթութիւնը հարուածող) նեմեսիս մը, մինչ քաղաքակրթութեան մը վերելքին նպաստած ստեղծագործ վերնախաւը կը վերածուի ճնշող ուժի...:

Հեղինակը ճիշդ կ'եզրակացնէ իր աշխատասիրութիւնը հաստատելով, որ քաղաքակրթութիւններ կը մեռնին ինքնասպանութեամբ եւ ո՛չ թէ սպանութեամբ:

Արդարեւ մտածել տուող գիրք մըն էր, որ առիթը ունեցայ կարդալու ու անոր կարգ մը միտքերը միայն կիսուելու ձեռք հետ:

Կը մնայ անոր տրամաբանութիւնը հաստատող օրինակը մտաբերել, որ այս պարագային դժբախտաբար մեր սիրելի հայրենիքին ու աշխարհասփիւռ ժողովուրդին իրավիճակն է: Կարելի է անկէ անդին ալ անցնիլ ու մտաբերելով ներկայի աշխարհի քառսը, ըսել, որ գիրքին տեսութիւնը կը համընկնի Հայաստանի ու մեր ժողովուրդին հետ եւ ոչ միայն...:

Վերջապէս, գիրքին մէջ պարզ չէ անկումին ընթացքը շրջելու յաջողակ գործընթացը: Մեզի կը մնայ աշխատիլ եւ յուսալ, որ մեր ժողովուրդը ի վերջոյ կը վերադառնայ իր խիղճին դատողութեան ու ազգային արժեքներուն: Կը ծնի տեսլապաշտ ղեկավարութիւն մը, որ մեր Հայրենիքը կ'առաջնորդէ դէպի ապահովութիւն, կայունութիւն ու մարդկային թէ տնտեսական զարգացում...:

ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Հայաստանի Երկնային Հովանաւորը (Փարաջանովի Յիշատակի Օրուայ Առթիւ)

ՃՈՎԻՆԱՐ ԼՈՔՍԱԳՅՈՇԵԱԼ

Փարաջանովը փոխեց պատկերացումները ֆիլմարուեստի մասին: Շարժուող պատկերները, որոնք ինչ-որ պատմութիւններ էին պատմում, նա փոխարինեց աշխարհի պատկերով, ինչպիսին միայն ինքն էր տեսնում:

Զիչ թէ շատ տաղանդաւոր ֆիլմ ստեղծելու համար հարկաւոր է հանճար լինել, բայց հանճարեղ ֆիլմ ստեղծելու համար պէտք է Փարաջանով լինել: Մարդիկ կան, որոնք չեն դիտում նրա ֆիլմերը՝ ասելով «Չենք հասկանում, չենք սիրում»: Յիմարութիւն: Փարաջանովին պէտք չէ հասկանալ, եթէ չէք հասկանում: Հարկաւոր է միայն նայել: Գոնէ մէկ անգամ: Եւ դուք արդէն չէք լինի այն, ինչ էիք մինչեւ դիտելը:

Մահը

1990- ի յուլիսին գտնուում էի Մոսկուայում մի հրեայ կնոջ բնակարանում: Կինը ամէն կերպ ջանում էր զբաղեցնել ինձ: «Արի՛, արի՛», ձեր նախագահին են ցոյց տալիս», - կանչեց նա ինձ մի անգամ լուրերի թողարկման ժամանակ եւ ես տեսայ էքրանի վրայ Շեվարնաձէին: Սակայն միւս լուրը իրօք մեր մասին էր՝ դա Փարաջանովի մահուան բօթն էր, եւ սենեակը հրեայ կնոջ գոհունակ տեսքով լողաց իմ արցունքների մէջ: Ինչպէս, ինչպէ՛ս ես կարող էի բացատրել մի կնոջ, որի համար հայ, վրացի եւ ազերի մէկ էին, թէ ում կորցրեց այդ օրը մարդկութիւնը: Փարաջանովի համար բոլոր մարդիկ եւ կրօնքները մէկ էին, բայց բոլորովին այլ իմաստով, քան այս մոսկուաբնակ կնոջ համար:

«Հայկական հոտ»

1885-ին Երեւանի Կինոյի Տանը կայացաւ «Սուրամի ամրոցի լեգենդը» ֆիլմի առաջնախաղը: Փարաջանովը ինքը կանգնած էր մուտքի մօտ եւ հրաւիրում էր բոլորին՝ դիտելու իր ֆիլմը: Յետոյ բարձրացաւ բեմ՝ չափազանց յուզուած. - Վերակենդանացումը տեսում էր 15 տարի, -սկսեց նա: - Ընդհանրապէս ես չեմ սիրում սիւժետային ֆիլմեր, բայց այստեղ կայ սիւժէ: Ես ինքս թարգմանել չեմ կարող, որովհետեւ կը լացեմ: Ես շատ եմ ուզում, որ դուք հաւանէք ֆիլմը, ես հաւանեցի երրորդ անգամից:

Նա փորձում էր կատակել: Ստեղծելով այդքան լուրջ կինօ, ինքը Փարաջանովը չէր կարող մնալ լուրջ:

- Մի տիկին, որը մօտ է Վրաստանի մշակոյթի նախարարին եւ պտտում է բոլոր քովիսին խանութներով (սովետական շրջանում այդ խանութներում վաճառում էին արտերկրներում գնուած ապրանք), ասաց, որ Փարաջանովի ֆիլմը այնպիսի գեղեցկութիւն է, որը նա չի տեսել ոչ մի քովիսին խանութում... Մի ուրիշ տիկին, նոյնպէս Վրաստանի մշակոյթի նախարարութեանը մօտիկ անձնաւորութիւն, դիմեց ինձ երեք հարցով: Երրորդ հարցն էր «Ինչո՞ւ ձեր ֆիլմերում հայկական հոտ է զգացում»: Ես պատասխանեցի. «Գուցէ դա նրանից է, որ ես հայ եմ»: Կրկին կատակի փորձ:

Փարաջանովի արուեստի արմատները տանում են ոչ թէ դէպի ազգային հող, այլ անմիջապէս դէպի Գեղեցիկի գաղափար. այստեղ նա Աստուծո՛ւ հետ ուղիղ կապի մէջ է, այդ պատճառով Փարաջանովի ֆիլմարուեստը դա հայկական կինօ չէ, այլ Փարաջանովի կինօ է: Իւրաքանչիւր ազգային նիւթ Փարաջանովի ձեռքերի մէջ վերածում էր Գեղեցիկի նիւթի՝ արտայայտուած տուեալ ազգային ձեւի մէջ: Նիւթի լուծման ակունքը հենց Փարաջանովի մէջ էր, նրա աշխարհատեսութեան, այդ պատճառով նրան նմանակել անիմաստ է: «Պահպանե՛ք աշխարհի համար հայկական կինօն, -դիմեց հայերին՝ «Ոսկէ Ծիրան-2006» ի հիւր իրանական բեմադրիչ Ս. Մահմալբաֆը, - որքան ազգային մնաք, այնքան միջազգային կը լինէք: Սակայն մի՛ փորձէք նմանուել Փարաջանովին»:

Որոշակի ճիգեր են պէտք՝ հայկական ֆիլմարուեստը ծանօթացնելու համար աշխարհին, բայց Փարաջանովի կինօն առանց որեւէ ջանք գործադրուելու իր կողմից դարձաւ ողջ աշխարհի սեփականութիւնը:

«Մոռացուած նախնիների ստուերները» ֆիլմից յետոյ աշխարհի մեծագոյն բեմադրիչները խոնարհուեցին Փարաջանովի առջեւ, իսկ ֆրանսացի դերասան եւ դերասան Ռոպերտ Հոսսէյնը ասաց.

- Եթէ երբեւէ հարկ լինի որեւէ մի ստեղծագործութիւն ուղարկել Երկիր մոլորակի բնակիչներից այլ մոլորակների բնակիչներին, ապա դա պիտի լինի Փարաջանովի «Մոռացուած նախնիների ստուերները» ֆիլմը:

Այդ ֆիլմի համար նա վճարեց բանտարկութիւնով, որտեղ կալանաւորները չէին հաւատում, որ նա Փարաջանովն է: Սակայն ինքը՝ Փարաջանովը գիտէր,



որ «Գեղեցիկը զգալու համար պէտք է արիւնով վճարել»: Եւ ահա հետեւեց «Սուրամի ամրոցի լեգենդը», որտեղ ամենագեղեցիկ երիտասարդ տղամարդը իրեն կամաւոր զնդանում է բերդի պատի մէջ, որպէսզի բերդը կանգուն մնայ եւ դիմադրի թշնամիներին: Մարդու ոգին մարմնից ուժեղ է: Փարաջանովի ոգին մահից յետոյ բնակուեց Փարաջանովի տուն-թանգարանում, իսկ մեր երկիրը աշխարհի արուեստագետների համար դարձաւ Փարաջանովի երկիր:

Ստորագրութիւն անձնագրի մէջ

1989-ին Իսթանպուլում «Աշուղ Ղարիբ» ֆիլմի առաջնախաղին Փարաջանովը անձամբ ներկայ էր գտնուել: Ֆիլմի դիտումից յետոյ նրան շրջապատեցին բազմաթիւ երկրպագուներ, որոնք մեկնում էին բեմադրիչին ծրագրերը՝ ինքնագիր ստանալու համար: Յանկարծ նրանց մէջ յայտուեց մի անձնագիր: Փարաջանովը զարմացած նայեց անձնագրի տիրոջ աչքերին՝ նա մի ազերի էր Իրանից: Վերջինս հաստատեց, որ ուզում է ունենալ Փարաջանովի ստորագրութիւնը իր անձնագրում:

«Ճանապարհորդութիւն դէպի վեր», - այսպէս բնորոշեց իր այցելութիւնը Հայաստանում 20-րդ դարի մեծագոյն իտալացի սցենարիստ, բանաստեղծ ու նկարիչ՝ Տօնիսօ Գուէրրան:

Իրաւ, որպէսզի կանգուն մնանք ողորկ, անիմաստ հորիզոնական հարթութեան վրայ, մեզ հարկաւոր են ուղղահայեաց սլացող սիւներ, որոնք ապահովում են Փարաջանովի նման հանճարները:

1990-ին ընդմիջում եղաւ: Հանճարները գալիս ու գնում են, իսկ ընդմիջումներին մարդկութիւնը իւրացնում է իրենց թողած դրամապոլիւրը:

Լիբանանեան Լուրեր

Նասրալլա Կ'ուզէ Փոխել «Խաղի Կանոններ»ը Իսրայելեան Կեդրոն

Սկիզբը Էջ 01

Ան բացատրած է, որ ԱՄՆ-ի եւ Իսրայելի «թուլութիւն»ը կազմի եւ նաւթի իրենց հրատապ կարիքն է, որ Լիբանանին եւ Հրճպալլային հնարաւորութիւն կու տայ պայթեցնելու այն:

Մէջբերելով Նասրալլայի այն խօսքը, թէ «Նոր բանաձեւը «Քարիշ»ն է, եւ «Քարիշ»ն անդինը, եւ անելի անդինը», եւ զուգահեռ տանելով լիբանանեան երկրորդ պատերազմի նախօրէին հնչեցուցած նման խօսքին՝ «Հայֆան, եւ Հայֆայէն անդինը...», -կեդրոնը ընդգծած է, որ Նասրալլա վերադարձած է սպառնալիքներու մեթօտին, որ կիրառած էր Երկրորդ լիբանանեան պատերազմի օրերուն, եւ այժմ ան կը սպառնայ արձակել զինուած անօդաչու թռչող սարքեր եւ հրթիռային նռնակներ՝ «Քարիշ»ի կազային հարթակին ուղղութեամբ, ինչպէս նաեւ անկէ հեռու գտնուող թիրախներու վրայ՝ ակնարկելով Միջերկրական ծովուն մէջ Իսրայելի բնական կազի հանքավայրերուն:

Եզրափակելով հաղորդագրութիւնը, կեդրոնը մատնանշած է, որ «Նասրալլայի նոր սպառնալիքը առանձնացուած չէ տարածաշրջանային հիմնահարցէն՝ իրանեան սպառնալիքի առաջը առնելու վերաբերեալ: Հրճպալլան իրանեան ռեժիմի կարեւոր թեւն է, եւ Լիբանան-Իսրայել այս վեճն ուղղակիօրէն կապուած է համաշխարհային ուժանիւթի ճգնաժամին հետ», -գրած է կեդրոնը:

Լիբանանահայ Դպրոց

Մեսրոպեանի 29 Աշակերտներեն 27-ն Յաջողեցան Պարալորեայի Քննութիւններուն, 10-ն՝ Յիշատակութեամբ

Հայ կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանը պատուաբեր արդիւնք արձանագրեց 2021-2022 տարեշրջանի Բ. Պարալորեայի պետական քննութիւններուն. յաջողեցան մասնակից 29 աշակերտներէն 27-ը, որոնցմէ երեքը՝ «շատ լաւ», իսկ եօթը՝ «լաւ» յիշատակութեամբ: Յաջողած աշակերտներն են՝ Ընդհանուր Գիտութիւններու- ներու բաժին՝ (4/ 4) Նանօր Առնելեան (լաւ), Սեգար Եուսէֆ-Եագուպ (լաւ), Սահակ

Թաճեան եւ Յակոբ Ժամկոչեան: Կենսաբանութեան բաժին՝ (23 /25) Զրիստ Մելիտոնեան (շատ լաւ), Գարիկ Թորո (շատ լաւ), Փաթրիք Թոսունեան (շատ լաւ), Սինթիա Նազիբեան (լաւ), Ալեքսիա Փառլաքեան (լաւ), Աննա-Մարիա Ղազար (լաւ), Միրել Պէոյիւքեան (լաւ), Մարի-Ռոզ Գասարեան (լաւ), Փաթիլ-Աննա Աքանճեան, Գարլ Պերպերեան, Մեդրի Պոյաճեան, Սերլի Պոյաճեան, Կարէն Պոյաճեան, Սարին Տէմիրճեան, Զրիսթին Տեր-

Յարութիւնեան, Յովիկ Տիշչէքէ- նեան, Սառա Յարութիւնեան, Սարգիս Չաքմաքեան, Յովսէփ Գիրազեան, Հռութ Զիւրիմլեան, Ռալֆ-Անթոնի Միքայէլեան, Սերլի Նէմշէիրլեան եւ Մարիա-Զրիսթէլ Սալիպեան: Մեսրոպեանի տնօրէնութիւնը եւ ուսուցչական կազմը կը շնորհաւորեն աշակերտները, կը ինդակցին անոնց ծնողներուն եւ կը մաղթեն նորապէս յաջողութիւններ: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ



Թրքական Բարքեր

Թրքական Կայքը Համեմատած Է Հայկական, Յունական, Հրեական եւ Թրքական Սփիւռքները

Թրքական իշխանամերձ «Yeni Şafak» լրատուական կայքը «Ինչո՞ւ թուրքերը սփիւռք չունին» վերնագիրով յօդուածով մը համեմատած է ԱՄՆ-ի ու Եւրոպայի մէջ հայկական, յունական, հրեական սփիւռքներու եւ թրքականի գործունէութիւնները: Այս մասին կը հաղորդէ Ermenihaber.am-ը: Հեղինակը նախ իր տեսանկիւնէն ներկայացուցած է 3 սփիւռքներու ձեւաւորման պատմութիւնը, ապա անդրադարձած անոնց կողմէ յաջողութեամբ իրականացուող «անթիւ հակաթրքական արշաւներ»-ուն: Այնուհետեւ, անդրադարձած է 60-ականներէն ի վեր Եւրոպա գաղթած անլիք քան 6 միլիոն թուրքերու առկայութեան, որոնց մեծամասնութիւնը կ'ապրի Գերմանիա: Կը նշուի, որ միայն 2021-ին Գերմանիոյ խորհրդարանական ընտրութիւններուն իբրեւ արդիւնք՝ խորհրդարան անցած է 18 թրքական ծագումով պատգամաւոր, թուրք պատգամաւորներ կան նաեւ Եւրոխորհրդարանին մէջ, թուրք պաշտօնեաներ կան նաեւ

դաշնութեան նահանգներուն մէջ: Հեղինակը նաեւ յիշեցուցած է, որ հակառակ այս պատկերին՝ 2016-ին Գերմանիոյ խորհրդարանին մէջ ընդունուեցաւ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող օրինագիծը: Օրինագիծին աջակցած է թրքական ծագում ունեցող 11 պատգամաւոր, իսկ օրինագիծին հեղինակը եղած է թուրքիայէն արտագաղթած ճեմ Օզտէմիրը: Ըստ յօդուածագիրին՝ նմանատիպ պատկեր է նաեւ Չուիցերիոյ մէջ, ուր 2020-ի ընտրութիւններով խորհրդարան անցած թրքական ծագումով 4 պատգամաւոր աջակցեցան Նոյն թուականին խորհրդարան բերուած «Զիւրտ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը» անուանումով օրինագիծին: Կը նշուի, որ գրեթէ Նոյն վիճակն է Եւրոպական այլ երկիրներու մէջ՝ Հոլանտա, Պելճիքա, Դանիա, Աւստրիա եւ Չուիցերիա, ուր կան թուրք պատգամաւորներ ու այլ պաշտօնեաներ: «Եթէ թուրքիոյ վերաբերող հարցերուն մէջ թուրք պատգամաւորները

կ'ուզեն Հռոմի պապէն անլիք կաթողիկէ երեւնալ ու Թուրքիոյ դէմ օրինագիծերուն աջակցութիւն ցոյց կու տան, կը նշանակէ, որ այս գործին մէջ բան մը կայ», - գրած է հեղինակը եւ անլիքուցած, որ այս հարցին լուծումը հնարաւոր է թրքական պետու-

թեան ու ժողովուրդի, Եւրոպայի թրքական կազմակերպութիւններու ղեկավարներու, թուրք գործարարներու եւ սփիւռքի թուրքերու՝ Թուրքիոյ մէջ բնակող ազգականներուն համագործակցութեամբ միայն:

Ազատ Արցախի

2022-ին Արցախի Մէջ 792 Փոքրիկ Ծնած Է



2022-ի առաջին կիսամեակին Արցախի Հանրապետութեան առողջապահութեան նախարարութեան բուժհաստատութիւններուն մէջ ծնած է 792 փոքրիկ՝ 406 տղայ, 386 աղջիկ: Ստեփանակերտի մէջ ծնած է 697 փոքրիկ, Մարտակերտի մէջ՝ 66, Մարտունի՝ 29: Յունուար-Յունիս ժամանակահատուածին Արցախին մէջ արձանագրուած է զոյգ փոքրիկներու 4 ծնունդ: Հարկ է նշել, որ 6 փոքրիկ ծնած է արտամարմնային բեղմնաւորման ճանապարհով, որուն 3-ը տղայ, 3-ը՝ աղջիկ: Արցախի Հանրապետութենէն Հայաստանի Հանրապետութեան բուժհաստատութիւններուն մէջ

ծնած է 15 փոքրիկ՝ 8 տղայ, 7 աղջիկ: Ուստի, ԱՀ-ի մէջ ընդհանուր ծնելիութիւնը առաջին կիսամեակին կազմած է 807 փոքրիկ՝ 414 տղայ, 393 աղջիկ: 2021-ի առաջին կիսամեակի ընթացքին Արցախի առողջապահութեան նախարարութեան բուժհաստատութիւններուն մէջ ծնած էր 593 փոքրիկ՝ 270 տղայ, 323-աղջիկ, որ կը նշանակէ, թէ ընթացիկ տարուան Նոյն ժամանակահատուածին ունինք նորախալի փաստ այս առումով, որ ծնունդները թիւը աճած է գրեթէ 200-ով, եւ նորածիններուն մէջ կը գերակշռեն ապագայ զինուորները: Արցախի Հանրապետութեան առողջապահութեան նախարարութիւն



Մարզական

ՀԲԸՄ- ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթի Աղջիկները Լիբանանի Փինկ Փոնկի Ախոյեան

Հինգշաբթի, 14 Յուլիս 2022-ին, Լիբանանի փինկ փոնկի ֆեդերասիոնին կազմակերպութեամբ, Մոն Լա Սալի մէջ, Այն Սաատէ, սկսաւ Լիբանանի փինկ փոնկի աղջկանց Ա. դասակարգի խմբային ախոյեանութիւնը: Ախոյեանութեան մասնակցեցան երկու խումբներու բաժնուած տասը խումբեր: Իւրաքանչիւր խմբակ՝ հինգ խումբ: ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթ պարտութեան մատնեց մրցակից չորս խումբերը՝ Մըրժայուն Պլաթ՝ 3-0, Աիլի Խիամ՝ 3-0, Շարիթէ Տար էլ Նուր 3-0, Լիուա Սայտա՝ 3-0 եւ

անցաւ կիսաարտական փուլ, ուր ՀԲԸՄ Պեյրուլթին՝ 3-0 արդիւնքով յաղթելէ ետք հասան աւարտականին: Աւարտական մրցումին, ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթի աղջիկները՝ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեցին Աիլի Սայտան եւ յաջողաբար երկրորդ տարին ըլլալով արժանաւորապէս տիրացան խմբային ախոյեանութեան տիտղոսին: Մեր սրտագին շնորհաւորութիւնները ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթի մարզուհիներ՝ Մարիանա Սահա-



կեանին, Լեթիսա Ազարին, Թալիա Ազարին, Լիբանանի ֆեդերասիոնի մէջ ՅԵԸ-ի ներկայացուցիչ, գլխաւոր մարզիչ Սահակ Պիտինեանին այս հպարտալի յաղթանակներուն առիթով: **Մրցանակաբաշխութիւն** Շաբաթ, 16 Յուլիս 2022-ի երեկոյեան, Մոն Լա Սալի մէջ, Այն Սաատէ, տեղի ունեցաւ ախոյեանութեան մրցանակաբաշխութիւնը: Հանդիսաւոր արարողութեան ներկայ գտնուեցան Լիբանանի փինկ փոնկի ֆեդերասիոնի նախագահ Ժորժ Զուկալի, ֆեդերասիոնի անդամ Նեժի Հալալ, ՅԵԸ-ի Կեդրոնական

Վարչութեան ատենապետ Վիգէն Զեյչեան եւ ակումբներու ներկայացուցիչներ:



ՀԲԸՄ- ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթի Տղաքը Երկրորդ Դիրքը Գրաւեցին Լիբանանի Փինկ Փոնկի Ախոյեանութեան Մրցումներուն

Երեքշաբթի 12 Յուլիս 2022-ին, Լիբանանի փինկ փոնկի ֆեդերասիոնին կազմակերպութեամբ, Մոն Լա Սալի մէջ, Այն Սաատէ, սկսաւ Լիբանանի փինկ փոնկի տղոց Ա. դասակարգի խմբային ախոյեանութիւնը: Ախոյեանութեան մասնակից տասներկու խումբերը բաժնուած էին երկու խմբակներու: Իւրաքանչիւր խմբակ՝ վեց խումբ: ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթ մասնակցեցաւ Ա. խմբակի մրցումներուն եւ պարտութեան մատնեց իր բոլոր մրցակիցները. Ռիատի Պեյրուլթ՝ 3-0, Ֆետի Ադուաս՝ 3-0, Լիուա Սայտա՝ 3-0, ՀԲԸՄ Ճիւնի՝ 3-0 եւ Լիբանանեան բանակ՝ 3-2: Սոյն յաղթանակներուն լոյսին տակ, ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթ գլխաւորեց իր խմբակին ընդհանուր դասաւորումը եւ անցաւ կիսաարտական փուլ: Կիսաարտականին մեր տղաքը՝ 3-2 արդիւնքով

պարտութեան մատնելէ ետք Ղատիի Ճըպչիթը, հասան եզրափակիչ մրցումին: Եզրափակիչին մեր տղոց մրցակիցը Ռիատի Ղազիրն էր: Աւարտական մրցումը սկիզբը կ'ընթանար ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթի առաւելութեամբ: Ճակատումը երկարեցաւ երեք ժամ եւ միայն վերջին պահուն, մեր տղաքը նուազագոյն՝ 3-2 արդիւնքով զիջեցան մրցակիցին: ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթը ներկայացուցին՝ Ալֆրետ Նաժըմը, Սաատէլտին Հապաշը, Մուհամմետ Հապապաշը, Շերպել Սթեֆանը եւ Էլիճո Ապտելուրը: Նորանոր յաջողութիւններու բարեմաղթութիւններով, կը շնորհաւորենք ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթի տղոց խումբը, Լիբանանի ֆեդերասիոնի մէջ ՅԵԸ-ի ներկայացուցիչ, գլխաւոր մարզիչ Սահակ Պիտինեանը հպարտալի այս յաղթանակներուն



առիթով: Կ'արժէ նշել, որ ՅԵԸ Անդրանիկ Պեյրուլթի տղաքը, որոնք անցեալ տարի շահած էին տղոց Լիբանա-

նի ախոյեանութեան տիտղոսը, սոյն ամսուան 26-ին պիտի մեկնին Ամման, մասնակցելու Ասիոյ ախոյեանութեան մրցումներուն:

Վերածնունդի Գիշերը...

ԿԱՐՕ ՊՕՅՃԱԼԵԱՆ

Քաղաքի երոպական մասին մեջ, գեղեցիկ ոճով շենքերով Ֆուսատ Ա.ի պողոտան, ճաշակալոր ապրանքներով լեցուն մեծ վաճառատունները, փայլուն հայելիներով վայելչագեղ տեսքով ճաշարանները եւ մայթերով վրայ ալ ճերմակ սփռոցով շարունած սեղանները, Գահիրեի այն ատենուայ ճաշակալոր գնումներու եւ շքեղ վայրերուն մաս կը կազմէին:

Պողոտայի վրայի այդ ճաշարաններուն սեղանները եւ աթոռները, յատկապէս կեսօրուայ եւ իրիկուայ ատենները, միշտ յաճախորդներով գրաւուած կ'ըլլային, եւ հակառակ անցնող կառքերէ հնչող շչակներու բարձր ձայներուն, մթնոլորտը սեղաններու շուրջ միշտ տաք եւ մայթերուն վրայ թեւակցուկ քալողներու մօտ ալ, ուրախ եւ հաճելի կ'ըլլար:

Սակայն Ֆուսատ Ա. պողոտայի այս երեւոյթը, 1952ի կէսերուն, համապատասխան չէր երկրի քաղաքական կացութեան:

Ժողովուրդը բազմաթիւ պատճառներով դժգոհ էր օրուայ թագաւոր Ֆարուք Ա. Էն, եւ քաղաքական ու կրօնական զանազան հոսանքներ ալ օգտուելով առիթէն, անգլիական տիրապետութեան դէմ ցոյցեր կը կազմակերպէին եւ փայտէ երկար ձողերու ծայրը դրօշներ կապած, լողունգներ պոռայով կ'անցնէին փողոցներէն:

Բայց ցոյցեր կամ «մուգահիրա»ներ ընողներէն զատ, դեռ եգիպտական բանակի երիտասարդ սպաներուն մէջ ալ դժգոհութիւն տարածուած էր եւ անոնց ու ժողովուրդին գլխաւոր թիրախը, յատկապէս անգլիացիները, հրեաները եւ ընդհանուր ձեւով ալ երկրին մէջ բնակող երոպացի օտարականներն էին: Բացայայտ էր բոլորին, որ երկիրը այս պայթուցիկ վիճակէն խաղաղ կեանքի վերադառնալու համար, նոր ընտրութիւններ հարկաւոր էին, եւ արդէն քաղաքական երկու գլխաւոր կուսակցութիւններ ալ, նոր կազմուելիք խորհրդարանին մէջ առաւելագոյն թիւով աթոռներ ապահովելու համար, կանուխէն սկսած էին պատրաստութիւններ տեսնել:

Այդ օրերուն կը յիշեմ, «Ուաֆտ» կուսակցութեան կողմէ Մուսթաֆա Նահիաս փաշային եւ Իթթիհատ» կուսակցութեան կողմէն ալ Ալի Մահերին նկարները, փայտէ շրջանակներու մէջ առնուած, մեր տան փողոցի պատերուն վրայ զատ զատ փակցուած էին:

Երկուքն ալ վարչապետութեան պաշտօնի թեկնածուներ էին: Ես ամէն անգամ երբ դպրոցէն վերադառնալուս այդ նկարներուն առջեւէն անցնէի, եւ Մուսթաֆային բարձր ֆէսով ու շիլ աչքով ժպտուն, բայց տգեղ դէմքին նկարը տեսնէի, բնագործէն դէմը հակակրօնութիւն կը զգայի: Մուսթաֆան գեղեցիկ չէր եւ իրականութեանը մէջ իր սեւ ներկով քաշուած նկարին մէջ ալ բնաւ յաջող չէր ելած:

Սակայն անկէ քիչ անդին երբ Ալի Մահերին առանց ֆէսի, մաքուր ածիւղած եւ համակրելի դէմքով նկարին նայէի, կը խորհէի որ ան իր ներկայանալի արտաքինով, անելի յարմար էր վարչապետի պաշտօնը գրաւելու...:

Բայց Մուսթաֆան հին եւ փորձառու դիւանագետ էր եւ եթէ չեմ սխալիր, արդէն ուրիշ անգամներ ալ կառավարութեան մէջ կարելոր պաշտօններ վարած էր: Ան գիտակցելով որ այն տարուայ ընտրապայքարը նախորդներէն անելի զօրաւոր պիտի ըլլար, ճառերուն շէշտը անգլիացիները երկրէն վերջնականապէս դուրս վտարելու վրայ դրած էր, ու այդ պատճառաւ ալ, ժողովուրդին մէջ անելի մեծ թիւով համակիրներ ունենալ կը թուէր:

Սակայն ես ատենին հազիւ տասնմեկ տարեկան տղայ, դեռ Ալի Մահերի թեկնածութիւնը կը նախընտրէի, եւ ամէն անգամ երբ Ուաֆտի համախոհ խումբեր, բեռնակառքերու ետեւի բաց մասերու մէջ իրարու սեղմուած եւ մահակներով զինուած, «Նահիա՛ս, Նահիա՛ս» պոռայով մեր տան առջեւէն անցնէին, ես պզտիկ ձայնովս, պատշգամէն «Ալի Մահեր» կը պոռայի եւ վազելով անմիջապէս ներս կը փախչէի:

Այդ վայրկեաններուն ես ներքին գոհունակութիւն կը զգայի եւ դեռ պզտիկ տղու պարզամիտ մտայնութեամբ ալ, հեռացող բեռնակառքերուն ետեւէն կ'ուրախանայի, որովհետեւ Նահիասին դէմ դժգոհութիւնս յայտնած ըլլալ կը խորհէի:....:

*
**

Այն օրը թուականով 26 Յուլիս էր եւ տարին ալ 1952 :
Չորրորդ դասարանի գիտութեան մեր ուսուցիչը՝ մագոտ ականջներով եւ կանանչ աչքերով պրն Առաքել Տրդատեանը, իր բարձր սեղանին ետեւէն, նայուածքը դիմացի գրասեղաններու ետեւի շարքին մէջ Յարութիւն Տէյրմենճեանին կողմը դարձուց եւ
- Յարութիւն, ըսէ՛ տեսնեմ որո՞նք են մեր մարմինին երեք գլխաւոր մասերը,-



հարցուց:
Յուլիս ամսուն մէջ էինք եւ եղանակը ամառ էր:

Դասարանին բակ նայող պատուհանները բաց էին, բայց հով չկար եւ յետմիջօրէի մեծ զբօսանքէն դեռ քրտնած դէմքով Յարութիւնը այդ պահուն յոգնած կ'երեւէր:

Ան մեքենաբար ոտքի ելաւ, եւ կարծես միտքով ուրիշ տեղ ըլլար, չորս կողմը դանդաղ նայուածք մը պտըտցուց, յետոյ բերանը բացաւ եւ

- Գուլիս եւ իրան,- պատասխանեց վարանոտ:

Շուրջի գրասեղաններէն անմիջապէս զսպուած խնդրեցի ձայներ լսուեցան...:

Բայց պրն Տրդատեանը բարի եւ համբերող էր ու թերեւս ալ խորհելով, որ Յարութիւնը լաւ չէր հասկցած իր հարցումը,

- Չէ Յարութիւն չեղա՛ւ, - ըսաւ,- ու յետոյ ալ, Յարութիւն դեռ առիթ մը եւս տալու համար,

- Որո՞նք են մեր մարմինին երեք գլխաւոր մասերը,- կրկնեց եւ կարծես իր հարցումին պատասխանն ալ Յարութիւնին դիւրացնելու համար «երեք» բառը սովորականէն զօրաւոր շէշտով արտասանեց:

Բայց Յարութիւնը չգիտցաւ օգտուիլ առիթէն: Ան չորս կողմը յոգնած նայուածք մը պտըտցուց ու յետոյ առանց պատասխանելու, լուռ, առջեւը նայեցաւ:

Ան մեզմէ մէկ կամ երկու տարի մեծ էր: Յարթանդամ մարմնով եւ բաւական զանգուր մազերով, նախորդ տարին դասարանը կրկնած հիմա մեզի միացած էր:

Յարութիւնը ոտքի կեցած կը մտածէր...:

- Դուն ձեռք, ոտք չունի՛ս,- լսեցինք պրն Առաքելին դեռ օգնել ուզող ձայնը...:

- Ունիմ,-պատասխանեց դանդաղ, կարծես քունէն սոր արթնցած մեր դասընկերը...

- Ուրեմն ծայրէն սկսէ եւ մեզի ըսէ նայիմ, որո՞նք են մեր մարմինին երեք գլխաւոր մասերը...

- Գուլիս, իրան եւ ոտքեր ու ձեռքեր ...

Դասարանին մէջ քիչ առաջուայ զսպուած խնդրեցի ձայները դարձեալ լսուեցան:

- Ո՛չ,- բացատրեց պրն Տրդատեանը մեղմ ձայնով,- մենք գլուխ, իրան, ոտքեր ու ձեռքեր չենք ըսեր Յարութիւն...:

Յարութիւնը լուռ կեցաւ ու չպատասխանեց:

- Մենք գլուխ, իրան եւ անդամներ կ'ըսենք,- շարունակեց պրն Առաքելը:

- Գուլիս, իրան եւ անդամներ,- կրկնեց ուսուցիչին ետեւէն մեր դասընկերը, յետոյ ձեռքերուն նայեցաւ եւ սպասողական դիրքի մէջ յաջորդ հարցումին սպասեց:

Սակայն պրն Տրդատեանը ժամանակ չունեցաւ ուրիշ հարցումներ ուղղելու: Դասարանին դուռը յանկարծ կռնակի վրայ բացուեցաւ, դպրոցի տնօրէն պրն Պապիկեանը փոթորիկի արագութեամբ ներս մտաւ, եւ մեր ուսուցիչի ականջին ցած ձայնով արագ- արագ բաներ մը փսփսաց, եւ երբ ետ դարձաւ ու դեռ բաց մնացած դրան առջեւ հասաւ, պրն Առաքելին բարձր « հիմա, անմիջապէ՛ս» պոռաց եւ աճապարանքով հեռացաւ:

Իր երթալէն յետոյ, Պրն Տրդատեանը դասարանի պատուհաններէն մէկուն մօտեցաւ եւ քաղաքին կողմը նայեցաւ: Հեռո՛ւն ծուխի թանձր սիւներ ոլորուելով երկինք կը բարձրանային:

Յայտնի էր թէ կեդրոնին կողմերը մեծ համեմատութիւններով հրդեհ սկսած էր: Պրն Տրդատեանը պատուհանին ապակիէ փեղկերը ամուր գոցեց եւ երբ մտահոգուած դէմքով մեր կողմը դարձաւ, նշմարեցինք որ աչքերուն կանանչը հագած զգեստին նման բաց մոխրագոյնի վերածուած էր:

Վերածնունդի Գիշերը...

Սկիզբը էջ 06

Բայց պրն Տրդատեանը մեզի բան չըսաւ, սակայն երկու քայլ առնելէ յետոյ, երբ իր ակնոցները ծալեց, ձայնին ու շարժումներուն մէջ հանդարտութիւն կեղծելով

- Տղա՛ք, առէք ձեր պայուսակները եւ անմիջապէս բակ իջէք ... այսօր կանուխ տուն պիտի վերադառնաք,- ըսաւ:

*
**

Դպրոցին երկաթէ կանանչ դարպասին առջեւ, բակը լեցուած էր բոլոր դասարաններէ եկող երկսեռ աշակերտներով, ծանօթ եւ անծանօթ դէմքերով, ու մանաւանդ մտահոգ դէմքերով անհանգիստ ուսուցիչներով, որոնք այդ վայրկեանին աշակերտները ապահով տուն հասցնելու մասին կը մտածէին...:

Շրջան ընող անորոշ շշուկներ եւ ձայներ, բակին մէջ արդէն լուր տարածած էին, որ ցուցարարներ քաղաքին կեդրոնի շքեղ մասը հրոյ ճարակ դարձուցած էին եւ կառքով քաղաքի կեդրոնը գացողներու վրայ ալ յարձակումներ կը գործէին: Կացութիւնը վտանգաւոր էր եւ այդ պատճառաւ ալ, դպրոցին երեք օթոպիւսները, մայթին առջեւ կը սպասէին եւ չէին համարձակեր աշակերտները տուն փոխադրել:

Արդէն անոնցմէ առաջին մեկնողն ալ, ճամբան յարձակում կրելով, հագիւ կրցած էր վերադառնալ եւ աշակերտները ետ դպրոց բերել...:

Կացութիւնը մտահոգիչ էր եւ բոլորս ալ «Ինչպէ՛ս տուն պիտի հասնինք» կը մտածէինք:

Երբեմն-երբեմն դպրոցին երկաթէ գոց դարպասը դուրսէն կը ծեծէին, եւ ծնողներէն դպրոցին մօտ բնակողները, կամ ալ լուր առնողները կու գային, եւ իրենց զաւակներուն հետ ուրիշներ ալ կը տանէին: Դժուար ժամեր էին, բայց բոլորն ալ պատրաստ էին մէկը միւսին օգնելու:

Սակայն այն օրերու հաղորդակցական միջոցները այսօրուան պէս արագ չէին, բջիջային, համակարգիչ կամ անոնց նման ուրիշ գործիքներ ալ չկային, եւ հեռաւոր թաղերու մէջ բնակող ծնողներու լուր տալը դիւրին չէր: Մենք՝ բակին մէջ մնացողներս մտահոգ,

- Ո՛վ պիտի գայ մեզ տուն տանելու,- կը մտածէինք... կամ ալ

- Ե՛րբ մէկը պիտի գայ ու մեզ ազատէ,- հարց կու տայինք մենք մեզի, եւ աչքերնիս դարպասին յառած՝ մեր ծնողներէն մէկուն կը սպասէինք:

Բայց հարցումները մեր միտքերուն մէջ անդադար շրջան կ'ընէին ու միշտ կը կրկնուէին...

- Ո՛վ պիտի գայ... Ե՛րբ պիտի գայ... ո՛վ պիտի գայ... Երկաթէ դարպասին վերջին բացուելուն շատ ժամանակ չէր անցած, երբ անգամ մըն ալ զարնուեցաւ, եւ կիսաբաց դրան սեմին յանկարծ ինծի ծանօթ դէմք մը երեւցաւ:

- Պրն Մարտիրո՛սը... խորհեցայ եւ միտքս վայրկեանաբար դադրեցաւ հարցումէ հարցում ցատկելէ...:

Կարճահասակ, ճերմակ մազերով նիհար պրն Մարտիրոսը, մեր դրացին էր: Ան եկած էր ինձմէ երկու կամ երեք տարեկան փոքր իր զաւակը՝ Նուպարը, տուն տանելու:

Դարպասի առջեւի մայթին վրայ,

- Տեսէ՛ք տղաք,- ըսաւ ան Նուպարին, եղբօրս եւ ինծի,- կառքով կամ թաքսիով կարելի չէ տուն երթալ: Մենք պիտի փորձենք քալելով տուն հասնիլ,

բայց չըլլայ որ ձեզմէ մէկը ձեռքս ձգէ կամ քովես հեռանայ...:

Դպրոցէն մինչեւ մեր տունը, մօտաւորապէս քառասուն վայրկեանի հեռաւորութիւն էր քալելով, բայց ճամբու կէսին մօտերը, ստիպուած պիտի ըլլայինք էինք քաղաքին մէջի հրդեհ եղած մասէն անցնիլ:

Մենք այն օրուայ ամէն կողմ ծաւալած հրդեհներու մասին ճիշտ գաղափար չունէինք, եւ կացութեան ծանրութեան մասին միայն իրագել դարձանք, երբ Սոյիման Փաշայի խաչմերուկէն անդին, Rue Fuad ի վրայ գտնուող շքեղ վաճառատուններուն մօտեցանք:

Յոն փողոցին մէջ աննկարագրելի իրարանցում կը տիրէր եւ խելագարած ամբոխ մը, մինչեւ Էզպէքիայի պարտեզին մօտերը գտնուող օտարականներու պատկանող բոլոր շքեղ եւ մեծ վաճառատուները արդէն կրակի տուած էին:

Բոցերը մեծ հաստատութիւններու բարձր պատերը կը լզէին: Chemla, Sicurel, Orecco մեծ վաճառատուներու շէնքերը կրակներու մէջ կը ճարձատէին եւ կառոյցները տաքութեան չդիմանալով կը փլէին ու շռնդալից աղմուկով փողոցի մայթերուն վրայ կ'իյնային:

Կատողած՝ ամբոխը կարծես կորսնցուցած ըլլար իրականութեան գիտակցութիւնը, երկաթէ ձողերով ու փայտերով անկաշկանդ կը յարձակէր, աննախընթաց թափով ապակիներ կը փշրէր, դռներ կը կոտրէր, ու անարգել կը կողոպտէր օտարականներու պատկանող շքեղ խանութները: Ուրիշներ, բարկութեան եւ զայրոյթի աղաղակներով, փողոցին մէջ խանութ խանութ կը վազէին եւ առջեւին հանդիպած ամէն ինչ, գոռում-գոչումներով անխնայ կը կոտրէին ու կը փշրէին:

Կեսնքը ոչինչ կ'արժէր փողոցին մէջ այդ ժամուն, եւ ծննդավայրի սերն ալ իմաստէ բոլորովին զուրկ դարձած էր խուժանի վայրագութեան եւ վախի զգացումներուն դիմաց:

Սակայն ահռելի էր խանութները քանդելու տեսարանը: Իսկ խելագարած ամբոխին մէջ, վրեժի կամ մոլեռանդութեան չափ ու սահման դնող չկար: Վաճառատուներու երկրորդ եւ երրորդ յարկերէն, ցուցափեղկերու ջարդուած ապակիներ, զգեստներ ցուցադրելու մանեքիներու մամիներ կամ թելեր ու զլուխներ, ասֆալթին վրայ շռնդալից կ'իյնային ու կը ջախջախուէին:

Փողոցին մէջ վիրաւորուելու վտանգը մեծ էր, եւ մինչեւ իսկ ճամբան շեղելու եւ Ֆուատ Ա.ի մօտիկ կամ զուգահեռ փողոցներէն անցնիլն ալ ապահով չէր:

Սակայն ուրիշ ճամբաներ շատ չկային: Մենք ստիպուած, երբեմն անցանք փողոցին դժուար մասերէն, քալեցինք բոցերու մօտէն, եւ մեր այտերը յաճախ կարմրեցան ու աչքերն ալ արցունքոտեցան...:

Բայց Պրն Մարտիրոսը միշտ մեր քովն էր, մեր ձեռքէն բռնած կը քալէր ու մենք այնպէս կը զգայինք, որ բոլորիս ապահովութեան պաշտպանը ինքն էր:

Երբ կարելի ըլլար ճամբան կը փոխէր, յարաբերաբար աւելի հանդարտ փողոցներէ կ'անցնէինք, սակայն ինք, դպրոցի մայթին վրայ մեզի տուած իր պատուէրը չէր մոռնար եւ ամէն քայլափոխի

- Տղա՛ք, ուշադրութիւն ըրէք, քովէ՛ս քալեցէք .- կը կրկնէր շարունակ:

Շաբ. էջ 08

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Հասկանո՞ւմ ես՝
ես դեռ պիտի կիսունք սկաբեմ,
գրքեր գրեմ,
փաթաթուեմ քեզ
ու մտածեմ՝
ինչ լաւ է՝ կաս,
ինչ լաւ է,
որ հանդիպեցինք:


Հասկանո՞ւմ ես՝
ես դեռ պիտի քննարկեմ
էդ կիսունքը քեզ հետ,
պիտի գինի խմենք,
եւ ես պատմեմ,
որ այն հատուածը քո մասին է,
եւ թէ ինչպէս եմ ես սպասել քեզ
դու կգտնես այս ֆիլմում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

23 2022
ՅՈՒԼԻՍ

Կրկ Երկ Երք Զրք Յնգ Ուրք Շբք

					1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30
31						



ՎԱՀԱՆ ԽՈՐԷՆԵԱՆ
(1928 – 2003)
«Սպասում»

Վերածնունդի Գիշերը...

Շաբ. էջ 07-Էն

Ես քովեն չէի հեռանար, ձեռքն ալ չէի ձգեր, բայց ամեն անգամ իր ըսածը լսելուս

- Այս պրն Մարտիրոսը ինչո՞ւ համար ըսածը միշտ կը կրկնէ,- կը հարցնէի ինքզինքիս...:

Բոցերու տաքութենէն, փողոցին մէջ տիրող իրարանցումէն եւ խուժանին աղմուկէն ես յոգնած կը զգայի:

Կ'ուզէի ժամ առաջ տուն հասնիլ, ազատիլ այդ բոլորէն եւ հանգստանալ, բայց ճամբան անվերջանալի կը թուէր ու ես

- Այս բոլորը ե՞րբ պիտի վերջանայ,- հարց կու տայի ինքզինքիս յուսահատօրէն...:

*
**

Քաղաքին շքեղ մասի սրտին հրկիզումը, կէսօրէ վերջ ժամը երկուքի կամ երեքի մօտերը սկսած էր, բայց միևնույն արեւին հորիզոնին վրայ անհետանալու մօտիկ ժամերուն, երբ բանակը փողոց իջաւ, կռիւը դեռ չէր դադարած եւ խռովարարները զսպելու գործն ալ յայտնի դարձաւ, որ դեռ երկար պիտի տեւէր...:

Ես այդ ժամուն, երեսս պատշգամի ճաղերուն փակցուցած՝ յոգնած եւ կիսախուկ աչքերով, անկիւնի սրճարանի կէս մարած լոյսերը կը դիտէի եւ հրացաններու հեռուէն եկող թքթքոցին կը հետեւէի:

Հրացանաձգութիւնը երբեմն կը տարածուէր, կը զօրանար, ու կարծես պահ մը յետոյ, անլի հեռու տեղերէ կը լսուէր:

Ես ուժասպառ էի եւ երգի մը հեռացող եղանակին չափ տկար կը զգայի:

Ո՞րքան տեւեցին հրացանաձգութիւններու ձայները չեմ յիշեր, բայց հանգստանալու համար երբ վայրկեան մը պատշգամի փայտէ յատակին երկնցայ, եւ գիշերուայ հեռացող տաքութեան մէջ կիսախուկ աչքերով երկինք նայեցայ, ինծի այնպէս թուաց այդ պահուն, թէ վերի անծայր երկնքին վրայ գիշերուայ մեծ հանդէս տեղի կ'ունենար, եւ խումբ մը պսպղուն բայց դողդոջուն աստղեր, փչող հովերու դեմ լոյսերու մարմուռքով օրօրուելով կամ պարելով, ուրիշներու հետ ի՞մ ալ վերածնունդի գիշերս կը տօնէին...:

Սակայն ես քուն ունէի: Օրուան դէպքերը եւ հրդեհները զօրաւոր ազդած էին վրաս, ու ես կը զգայի, որ կոպերս սկսած էին ծանրանալ:

Յանկարծ պատշգամի ճաղերէն զով հով փչել սկսաւ, ու ես կէս քուն-կէս արթուն վիճակի մէջ, ուզեցի պահ մը մոռնալ հրդեհները, եւ երթալ ու կորսուիլ վերի ուրախ մթնոլորտին մէջ, խառնուիլ զիլ ու զուարթ փսփսացող ձայներու, ու յետոյ ալ աստղերու կապոյտ լոյսերուն մէջ նաւարկելով, հասնիլ հեռու գտնուող խաղաղ երկիրներ, ուր արշալոյսի զով ժամերուն, օրերը նոր ու գեղեցիկ երգերով կը սկսէին...:

- Կարելի՞ էր արդեօք յուսալ կամ գոնէ երազել, որ այդ տեսակ բաներ օր մը իրականութիւն դառնային ...:

Չէի գիտեր:

Գիտէի միայն, որ դեռ պզտիկ էի, եւ կ'ուզէի շուտ մեծնալ որպէսզի աշխարհի խաղաղ կողմերը շուտ հասնէի:

Սակայն դեռ կանուխ էր: Կեանքը օրերու իր մեծ տեսրակին էջերը դանդաղ կը դարձնէր, ու հոն գրուած ու միայն իրեն յայտնի եղած գաղտնիքներն ալ, անակնկալներով կը սիրէր բացայայտել:

Մենք տասը տարիներ սպասեցինք այդ անակնկալին, եւ միայն 1962 ին, զացինք հեռաւոր երկիր մը, հոն անոր երկնքին տակ խաղաղ օրեր ապրելու եւ օրուան մէջ ալ փայլուն արեւով տարին ամբողջ տաքնալու...:

Սակայն օրուայ վերջաւորութեան, երբ կլոր արեւը մայրամուտերու ժամանակ իր փայլը կը կորսնցնէր, ու յետոյ ալ լոյսը հետը տանելով յանկարծ կ'անհետանար, ես յաճախ դեռ երկինքի պսպղուն աստղերուն մէջ հին օրերս կը փնտռէի եւ պրն Առաքել Տրդատեանը, Յարութիւն Տէյիրմենճեանը ու Գահիրէի հովերուն դեմ մարմուռքով օրօրուող աստղերուն վերածնունդիս գիշերուայ պարերը կը յիշէի...:

Քամիինաս, Պրագիլ

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեանս տեսակետը: Կամքէ անկախ սպրդած վրիպակներու պարագային, կ'ապաւինիք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



ԹԵՔԵԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴՈԿՏ. ՆՈՒՊԱՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԱՅ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Մտաւորական, լրագրող, հասարակական գործիչ եւ ՌԱԿ բազմաթիւ թերթերու շուրջ կեսդարեայ խմբագիր Դոկտոր Նուպար Պերպերեանի 2022 թուականի մրցանակաբաշխութեան դիմելու մեկնարկը տրուած է:



Նուպար Պերպերեանի մրցանակը կը տրուի հայկական ծագում ունեցող ուսանողներուն, որոնք կը մասնագիտանան միջազգային իրաւունքի կամ քաղաքագիտութեան մէջ:

Մրցանակաբաշխութիւնը սահմանուած է մտաւորականի կտակին համաձայն, իսկ Պերպերեան կեանքէն հեռացած է 2016 թուականի Նոյեմբեր 23ին, 94 տարեկան հասակին:

Մրցանակաբաշխութեան մասնակցելու պայմաններն են՝

- 1) կրնան մասնակցիլ ուսումնական հաստատութիւններու՝ հայկական ծագում ունեցող ուսանողները, որոնք գլխաւորապէս մասնագիտացած են կամ միջազգային իրաւունքի, կամ քաղաքագիտութեան մէջ:
- 2) դիմորդը պէտք է ամբողջական դրոյքով ներգրաւուած ըլլայ աշխարհի հաւատարմագրուած քոլէճներու կամ համալսարաններու պաքալորեայի կամ ասպիրանթուրայի ծրագիրներով:
- 3) դիմորդը պէտք է ներկայացնէ ամբողջական տեղեկատուութիւնը, որ սահմանուած է դիմումի ձեւով:
- 4) դիմորդը պէտք է ներկայացնէ քոլէճի գրագրի պատճենը:
- 5) դիմորդը պէտք է ներկայացնէ դիմանկար:
- 6) դիմումագիրը հնարաւոր է ստանալ Tcadirector@aol.com ելեկտրոնային փոստին գրուած նամակի միջոցով:
- 7) դիմորդները պէտք է դիմումները ներկայացնեն ելեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով Tcadirector@aol.com հասցեով:
- 8) յայտերու ընդունման վերջնաժամկետը 2022 Սեպտեմբեր 15-ն է:
- 9) հիմնադրամի կառավարիչները 2022 թ. Հոկտեմբերին կը քուէարկեն որակաւորուած յաղթողներու օգտին՝ հաշուի առնելով իւրաքանչիւր դիմումատուին ներկայացուցած դիմումը:
- 10) յաղթողը կամ յաղթողները կը ստանան իրենց մրցանակները 2022 Նոյեմբերին:
- 11) յաղթողները իրաւասու չեն կրկին դիմել մրցանակի համար:

Ուղղորթառն, ԱՄՆ

70 Ամեակ

ՎԱՀԱՆ ԹԵՔԵԵԱՆ ՄԻՋՆ. ՎԱՐԺԱՐԱՆ-Ի
2022-2023 տարեշրջանի
ԿՐԹԱԹՈՇԱԿԸ

ԱՆՎՃԱՐ Է

Մանկամտրէն - 9-րդ դասարան

01/260525
01/260574

info@vahantekeyan.com

www.vahantekeyan.com